ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
«ՄԱԼԻՇԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ № 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ

Վայոց Ձոր Մարզի Մալիշկա բնակավայր
էլ. փոստ malishka.mankapartez.2@mail.ru
Հեռ. 281-95-7-82, Բջջ. 094-25-87-45

«29» Ապրիլի 2022թ.

«Շամս Գրուպ» ՍՊԸ-ի
Տնօրեն՝ Մ. Սլոյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Տեղեկացնում ենք, որ 2022 թվականի փետրվարի 14-ին «Մալիշկա համայնքի №2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության և «Շամս Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է ապրանքի մատակարարման ՎՁՄ-ՄՄ2-ԳՀԱՊՁԲ-22/01-05 Պայմանագիրը, համաձայն որի Դուք ստանձնել եք պարտավորություն պատշաճ կերպով մատակարարել սննդամթերքի այն չափաբաժինները, որոնցով հաղթող եք ճանաչվել նախապես հայտարարված գնման ընթացակարգի ժամանակ:

Սակայն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից առ այսօր «Մալիշկա համայնքի № 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը որևէ սնունդ չի առաքվել, Ձեր կողմից չի կնքվել մատակարարման համաձայնագիր, Ձեր կողմից աղերսված լրացուցիչ ժամկետները Ձեր անպատասխանատու և ապօրինի աշխատանքի հետևանքով թողնվել են անհետևանք՝ մանկահասակ երեխաների միջազգային և սահմանադրական իրավունքների կոպիտ խախտումով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով ՎՁՄ-ՄՄ2-ԳՀԱՊՁԲ-22/01-05 պայմանագրի 2.1.7 կետը մենք, որպես գնորդ միակողմանի լուծում ենք պայմանագիրը: Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ձեռնարկվելու են պայմանագրով և հրավերով նախատեսված համապատասխան միջոցներ՝ պայմանագիրը միակողմանի լուծելու արդյունքում առաջացած Ձեր պարտավորությունների կատարման համար:

Ձեր ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները

կից վճարման պահանջագրերի հետ միասին, սահմանված կարգով, կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ՝ տուժանքի մասին համաձայնագրով սահմանված գումարները «Մալիշկա համայնքի № 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու համար:

«Մալիշկա համայնքի № 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի

տնօրեն՝ Ա. Մաթևոսյան